Արձանագրություն N 1

28 հոկտեմբերի 2024 թ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող պետական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝

խորհրդի նիստ

(Երևանի Վ. Թեքեյանի անվան թիվ 92 հիմնական դպրոց, թիվ 105 ավագ դպրոց, 112 ավագ դպրոց, Ս. Խանզադյանի անվան թիվ 184 դպրոց, Գ. Գյուլբեկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց)

/Նիստը հրավիրվել է 2024 թվականի հոկտեմբերի 28-ին/

Նիստին մասնակցել են.

ՀՀԿԳՄՍ նախարարության ԿԶՆԱԿ հիմնադրամից Լիլիթ Մկրտչյանը,
Երևանի քաղաքապետարանից Հասմիկ Իսոյանը,
բոլոր նշված դպրոցներից 2-ական ներկայացուցիչներ.
թիվ 112 ավագ դպրոցից ուսուցիչ Աշխեն Շահբազյանը, ծնող Մարիամ Զաքարյանը,
թիվ 184 ավագ դպրոցից ուսուցիչ Արև Միքայելյանը,ծնող Լուսինե Պողոսյանը,
թիվ 190 ավագ դպրոցից ուսուցիչ Գոհար Բալյանը, ծնող Նազելի Ոսկանյանը,
թիվ 105 ավագ դպրոցից ուսուցիչ Նարինե Միլիտոնյանը,
թիվ 92 հիմնական դպրոցից ուսուցիչ Գոհար Զոբանյանը, ծնող Լուսինե Մկրտչյանը:
Նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով ներկա էին նաև թիվ 112 ավագ դպրոցի տնօրեն Օվսաննա Քարամյանը, թիվ 184 ավագ դպրոցի տնօրեն Տաթևիկ Մելքոնյանը, թիվ 190 ավագ դպրոցի տնօրեն Օլգա Սաղաթելյանը, թիվ 105 ավագ դպրոցի տնօրենի պաշտոնակատար Հասմիկ Նադիրյանը և թիվ 92 հիմնական դպրոցի տնօրեն Ծովինար Մարդանյանը:

Նիստից բացակայել են ԿԳՄՍ-ից Անի Խաչատրյանը և թիվ 105 դպրոցից ծնող Մերի Քալանթարյանը:
Սահմանված կարգի համաձայն՝ նիստը համարվել է իրավազոր:

Օրակարգում՝

1. Կոլեգիալ կառավարման խորհրդի նախագահի ընտրություն
2. Քարտուղարի ընտրություն
3. Ընթացիկ կազմակերպչական հարցեր

Կառավարման խորհրդի անդամները լսեցին՝

1. Հասմիկ Իսոյանին, որն առաջարկեց խորհրդի ավագ անդամին վարել առաջին նիստը, և քանի որ ավագ անդամը Նարինե Միլիտոնյանն էր, ուստի նա համաձայնեց ստանձնել այդ գործը: Վերջինիս կողմից նախ ընթերցվեց կոլեգիալ կառավարման մարմնի նախագահի ընտրության կարգը, ապա առաջարկվեց խորհրդի անդամներին ներկայանալ և առաջադրել խորհրդի նախագահի թեկնածուների անուններ:

Ներկայանալուց հետո առաջադրվեցին երեք թեկնածուների անուններ.

1. Արև Միքայելյան

2.Լիլիթ Մկրտչյան

3.Աշխեն Շահբազյան

Ապա կազմակերպվեցին կոլեգիալ կառավարման խորհրդի նախագահի ընտրությունները: Խորհուրդը փակ քվեարկությամբ խորհրդի անդամների ընդհանուր ձայների մեծամասնությամբ (6 ձայն)նախագահ ընտրեց Լիլիթ Մկրտչյանին:

2.Խորհրդի նորընտիր նախագահի կողմից առաջադրվեց քարտուղարի պաշտոնում ընտրել Աշխեն Շահբազյանին, և վերջինս խորհրդի կողմից միաձայն ընտրվեց կոլեգիալ կառավարման խորհրդի քարտուղար:

3 .Խորհրդի նախագահը խոսեց նաև Կոլեգիալ կառավարման խորհրդի աշխատանքները պատշաճ կազմակերպելու մասին: Առաջարկվեց, գործող կարգի համաձայն, խորհրդի նիստերը հրավիրել երեք ամիսը մեկ անգամ ՝ առցանց կամ հեռավար տարբերակով, անհրաժեշտության դեպքում հրավիրել նաև արտահերթ նիստեր:

Արտահայտվեց.

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Հասմիկ Իսոյանը, վերջինս, հաստատելով նշված աշխատակարգը, առաջարկեց նիստերը ամեն անգամ անցկացնել մեկ դպրոցում՝ ապահովելով դպոցների շփումը, փորձի փոխանակումը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող պետական հաստատությունների կոլեգիալ կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրության արդյունքները և խորհուրդի նախագահ համարել ձայների մեծամասնությամբ ընտրված Լիլիթ Մկրտչյանին, քարտուղար՝ Աշխեն Շահբազյանին:
2. ՀՀ օրենսդրության պահանջներից բխող գործող կարգի համաձայն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նիստերը անցկացնել երեք ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում արտահերթ նիստեր հրավիրել:

Նախագահ՝	Լիլիթ Մկրտչյան	
Քարտուղար՝	Աշխեն Շահբազյանին	
Անդամներ՝	Հասմիկ Իսոյանը	
	Մարիամ Զաքարյանը	
	Արև Միքայելյանը	
	Լուսինե Պողոսյանը	
	Գոհար Բալյանը	

Նազելի Ոսկանյանը

Նարինե Միլիտոնյանը

Գոհար Զորանյանը

Լուսինե Մկրտչյանը